ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Վաղատուրի մ/դ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ զինղեկի՝ 1 դրույք , դասվարի՝ 4-րդ դասարան / 1 դրույք / , 0.5 դ. ուսուցչի օգնականի /փոխարինող/, ֆիզկուլտուրա /1 դրույք /, երգ, կերպարվեստ/ 7 ժ /, աշխարհագրություն /7 ժ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դրույքաչափի :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)

2.Փաստաթուղթ /դիպլոմ/՝ <<Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի>> 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4)

, 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3-4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք)

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. օգոստոսի 26–ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 15-ին ժամը 14:00-ին , ՀՀ Սյունիքի մարզի Վաղատուրի միջնակարգ դպրոցում , հասցեն՝ Սյունիքի մարզ, գյուղ Վաղատուր:

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 098 090 590 հեռախոսահամարով:

Վաղատուրի միջնակարգ դպրոցի տնօրենի ժ/պ՝ / Մ. Առաքելյան /